ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2016թ. N 82 - Ա

« ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 722-Ա որոշման 10-րդ և 17-րդ կետերի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. << Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 42048000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը ավելացնել 405721152 ՀՀ դրամով՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով: Ավելացումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 447769152 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 12-ի N 158-Ա որոշմամբ հաստատված « Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 447769152 (չորս հարյուր քառասունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսուն ինն հազար հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, որը կազմում է 85192 (ութսունհինգ հազար հարյուր իննսուներկու) հատ հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 85192 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են»:

3. Հանձնարարել « Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ. սեպտեմբերի 27
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2016թվականի
սեպտեմբերի 23-ի N - Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմված է 24.09.2016թ և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 13.08. 2010թ.
Գրանցման թիվ- 222.120.01255
Վկայական 03Ա 089213
ՀՎՀՀ 0970524
13.08.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի
կողմից « » ---------- 2016թ

«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. « ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 447769152 (չորս հարյուր քառասունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսուն ինն հազար հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, որը կազմում է 85192 (ութսունհինգ հազար հարյուր իննսուներկու) հատ 5256 (հինգ հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 13.08. 2010թ.) բաղկացուցիչ մասը:

ք.Մեղրի-2016թ